«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԼԻՃՔ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1409 գ. Լիճք
Հեռ. 094-07-24-54
Էլ. փոստ lichq@schools.am

N'32

<<28>> <<10>> 2019թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ.

Տեղեկացնում եմ Ձեզ այն մասին, որ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով 2019 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 8 նիստում որոշում է ընդունել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու և մրցույթի օր նշանակելու մասին:

Կից ներկայացնում եմ խորհրդի որոշման և հայտարարության տեքստի լուսապատճենները:

Առդիր 3 էջ:

Հարգանքով՝

Խորհրդի նախագահ՝ Ե. Սիրականյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2019 թվականի հոկտեմբերի 25-ին կայացավ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նիստ՝ նախագահությամբ Ե. Սիրականյանի: Նիստին մասնակցում էին խորհրդի ութ անդամները:

Օրակարգում՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

(Զեկուցող՝ խորհրդի նախագահ՝ Ե. Սիրականյան)

Լսեցին- Խորհրդի նախագահ Ե. Սիրականյանի՝ «Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին» զեկույցը:

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> համաձայն <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար պետք է հայտարարի մրցույթ:

Արտահայտվեցին- Վ.Կարապետյանը, Ա. Վարդանյանը և Մ. Մուրադյանը:

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N-3 հավելվածի 51-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N-319-Ն որոշմամբ հաստատված, ինչպես նաև 2011 թվականի օգոստոսի 25-ի N-1221-Ն և 2014 թվականի հուլիսի 31-ի N-817-Ն որոշումներով փոփոխված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 6.1, 7-րդ և 8-րդ կետերի պահանջները, խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2019 թվականի նոյեմբերի 5-ից հայտարարել մրցույթ:

2.Հաստատել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված 1-ի:

3.Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել <<Գեղամա>> հեռուստաընկերությամբ երկու անգամ՝ հնգօրյա պարբերականությամբ, 2019 թվականի նոյեմբերի 5-ին և նոյեմբերի 9-ին: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N-174-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4.Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվում են հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից՝ 30 օրվա ընթացքում՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ:

5.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների (փաստաթղթերի) ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Ե. Սիրականյանի վրա:

6.Մրցույթն անցկացնել կազմակերպության շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2019 թվականի դեկտեմբերի 18 -ին՝ ժամը 14:00-ին:

7. Հանձնարարել խորհրդի նախագահ Ե. Սիրականյանին՝ կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտատարելու մասին խորհրդի սույն որոշման պատճեն եռօրյա ժամկետում պատշաճ կարգով, պաշտոնական գրությամբ ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին և ՀՀ կրթության , գիտության և սպորտի նախարարություն՝ մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ :

8.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Գեղարքունիքի մարզպետին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշման պատճեն ներկայացնելու օրվանից հինգ աշխատանքային օր հետո ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից խորհրդին գրավոր առարկություններ և առաջարկություններ չներկայացնելու դեպքում:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ե. Սիրականյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ դպրոցի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
   1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
   2) Բարձրագույն կրթությունը,
   3) ՈՒսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Հաստատության տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
   1) Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,
   3) Հաստատության ղեկավարման իրավունքի(հավաստագրի)պատճենը,
   4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),
   5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ(դրանց առկայության դեպքում),
   6) Աշխատանքային գրքույկի պատճենը:

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
3. Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2019 թվականի նոյեմբերի 9-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

   Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

   Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի հիմնական դպրոցում:

Լիճք գյուղի հիմնական դպրոցի խորհուրդ

25-ը հոկտեմբերի 2019թ.

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լիճք,Ա6 թաղ. 1-ին փ. թիվ 14

Հեռ..՝ 094072454 Էլ. փոստ՝ lichq@schools.am